## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով Կոմիտեին ամրակցված Մալաթիա-Սեբաստիա վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀ ՔԿ ԳՀԱՇՁԲ-ՄՍԸՆԱ-24/1» ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

25 հոկտեմբերի 2024թ.
ժամը՝ 17:00

ք.Երևան,Մամիկոնյանց 46/5

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝
Հանձնաժողովի անդամներ՝ Զ. Հունանյան, Ա. Հայրապետյան, Գ. Սեփոյան, Ա. Թումանյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Նազարյան

Հանձնաժողովի նիստին նախագահի մասնակցության անհնարինության պատճառով՝ համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 1-ին ենթակետի, նիստը նախագահում էր ըստ հանձնաժողովի կազմում ընդգրկման առաջնահերթության նախագահի թեկնածուից հետո նշված նիստին ներկա հաջորդող թեկնածու Զավեն Հունանյանը:

### 1. *Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք աշխատանքի գնի վերաբերյալ*

| *Չափաբաժնի համարը* | *Չափաբաժնի անվանումը* | *Գնման հայտով սահմանված գնվելիք աշխատանքի գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)* |
|---|---|---|
| 1 | **ՀՀ քննչական կոմիտեին ամրակցված Մալաթիա-Սեբաստիա վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքներ** | **5 709 460** |

### 2. *Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները*

«ՀՀ ՔԿ ԳՀԱՇՁԲ-ՄՍԸՆԱ-24/1» ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին: Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| *Հ/հ* | *Մասնակիցների անվանումները* | *Հասցեներ* |
|---|---|---|
| 1 | **«Ռենեսանս Գրուպ» ՍՊԸ** | ՀՎՀՀ՝ 08431303, ՀՀ Գեղարքունիքի մարզ, Ծովինար 2 ԹՂՄ. 1 Փ. 3, հեռ. 077 42 71 41, stepanyan-andranik@rambler.ru , tovmasyanxachatur1@gmail.com |
| 2 | **«Մուրադյան ՇԻՆ 86» ՍՊԸ** | ՀՎՀՀ՝ 00520489, ՀՀ Արարատի մարզ գյուղ Ազատավան Թումանյան փ տուն 57, հեռ. 043 10 10 15, muradyan86.shin@mail.ru |
| 3 | **«Բեստ Քոնսթրաքշն» ՍՊԸ** | ՀՎՀՀ՝ 00490097, ՀՀ ք. Երևան, Օստրովսկու փող., 48 տուն, հեռ. 041 01 43 43, best.const2020@mail.ru |
| 4 | **«Ջի ԷԼ Թի» ՍՊԸ** | ՀՎՀՀ՝ 08275477, ՀՀ Գեղարքունիք, ք.Մարտունի, Գետափնյա 2-րդ փ., 13-րդ նրբ.,/S/4ա, հեռ. 077 52 07 77, lara.ginoyan@gmail.com |
| 5 | **«ՋԱՏԵԳ» ՍՊԸ** | ՀՎՀՀ՝ 00454467, ՀՀ, ք. Երևան, Նար-Դոս 1շ., բն 31., հեռ. 094 08 08 00, janoyan-tigran@mail.ru, jateg-llc@rambler.ru |
| [illegible] | [illegible] | ՀՎՀՀ՝ 08425842, ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Վարդենիկ, 3 փող., 1-ին փակուղի, տ. 2, հեռ. 093 97 05 55, arstonllc@mail.ru |

### *3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, ինչպես նաև տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ*

3.1 Հանձնաժողովը ուսումնասիրելով **«Ռենեսանս Գրուպ» ՍՊԸ-ի** ներկայացրած հայտը արձանագրեց, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներին փոխկապակցված անձանց ցուցակում ներառված **«ՌԵՆԵՍԱՆՍ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ն** փոխկապակցված է **«Ռենեսանս Գրուպ» ՍՊԸ-ի հետ: «Ռենեսանս Գրուպ» ՍՊԸ-ն** ՀՀ ՔԿ ԳՀԱՇՁԲ-ՄԱԸՆԱ-24/1 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.3 կետի համաձայն Հավելված 1 Դիմում-հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ իր հետ փոխկապակցված անձինք բավարարում են հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, ուստի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության և 19-րդ ենթակետի պահանջների համաձայն՝ **«Ռենեսանս Գրուպ» ՍՊԸ**-ի գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող և այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակմանը:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքը, գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել **«Ռենեսանս Գրուպ» ՍՊԸ-ի հայտը:**

3.2 Հանձնաժողովն ուսումնասիրելով մյուս մասնակիցների ներկայացրած հայտերը արձանագրեց, որ ներկայացված հայտերում /հայտում առկա փաստաթղթերում/ առկա են անհամապատասխանություններ: Մասնավորապես՝

1) **«Մուրադյան ՇԻՆ 86» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները՝**

- Ներկայացված լիցենզիայի ներդիրի հետ կցված չէ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված համապատասխան լիցենզիան:
- Հավելված 1.1-ում գնման ձևը ճիշտ գրված չէ՝ «մրցույթ» բառը հարկավոր է հանել:
- Հավելված 1-ում լրացված են տեղեկություններ, որոնք չեն պահանջվում հրավերում առկա Հավելված 1-ի օրինակելի ձևով:

2) **«Բեստ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները՝**

- Ներկայացված հայտում բացակայում է հրավերով պահանջվող ՀՀ օրենսդրությամբ նախատեսված համապատասխան լիցենզիան:
- Հավելված 1.1-ում՝ ստորագրության դիմաց գրված չեն ընկերության անվանումը, ղեկավարի պաշտոնը և անուն, ազգանունը::
- Հավելված 1-ի 1)-ին կետը հրավերի օրինակելի ձևին չի համապատասխանում:

3) **«Ջի ԷԼ Թի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները՝**

- Հավելված 1.1-ի առաջին նախադասության մեջ գնման ձևը սխալ է նշված:

4) **«ՋԱՏԵԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները՝**

- Ներկայացված հայտում բացակայում է հրավերով պահանջվող ՀՀ օրենսդրությամբ նախատեսված համապատասխան լիցենզիան:

5) **«ԱՐՍՏՈՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները՝**

- Ներկայացված հայտում բացակայում է հրավերով պահանջվող ՀՀ օրենսդրությամբ

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով, ինչպես նաև **«ՀՀ ՔԿ ԳՀԱՇՁԲ-ՄՍԸՆԱ-24/1»** ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.9 կետով՝ Հանձնաժողովը որոշեց՝ 28.10.2024թ.-ին նիստը կասեցնել՝ ծանուցել **«Մուրադյան ՇԻՆ 86» ՍՊԸ-ին, «Բեստ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ին, «Ջի ԷԼ Թի» ՍՊԸ-ին, «ՋԱՏԵԳ» ՍՊԸ-ին և «ԱՐՍՏՈՆ» ՍՊԸ-ին** մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:*

***4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և գնման հայտով սահմանած գինը***

| Չափաբաժին 1՝ ՀՀ քննչական կոմիտեին ամրակցված Մալաթիա-Սեբաստիա վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերում | | | | | |
|---|---|---|---|---|---|
| h/h | Մասնակցի անվանումը | Գնման հայտով սահմանած գին | Գին /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Գին /ներառյալ ԱԱՀ/ |
| 1 | «Ռենեսանս Գրուպ» ՍՊԸ | 5 709 460 | 2,400,000 | 480,000 | **2,880,000** |
| 2 | «Մուրադյան ՇԻՆ 86» ՍՊԸ | | 3,737,751 | 747,550 | **4,485,301** |
| 3 | «Բեստ Քոնսթրաքշն» ՍՊԸ | | 4,040,000 | 808,000 | **4,848,000** |
| 4 | «Ջի ԷԼ Թի» ՍՊԸ | | 4,073,334 | 814,666 | **4,888,000** |
| 5 | «ՋԱՏԵԳ» ՍՊԸ | | 4,142,250 | 828,450 | **4,970,700** |
| 6 | «ԱՐՍՏՈՆ» ՍՊԸ | | 4,705,000 | 941,000 | **5,646,000** |

***5. Տվյալներ հայտերի վերաբերյալ կատարված հարցումների, պատասխանների և հրավերում կատարված փոփոխությունների մասին***

Հայտերի վերաբերյալ հարցումներ, պատասխաններ չեն եղել: Հրավերի փոփոխություն չի կատարվել:

***6. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին***

Հանձնաժողովը որոշեց նիստը շարունակել **01.11.2024թ. ժամը 11:30-ին**, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:*

***7. 01.11.2024թ. ժամը 11:30-ին նիստը վերսկսելու վերաբերյալ***

Նիստը վերսկսվեց 01.11.2024թ. ժամը 11:30-ին:

7.1 Հանձնաժողովն ուսումնասիրեց և արձանագրեց, որ մասնակիցների կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են շտկման ենթակա փաստաթղթերը:

**8. Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.**

| Չափաբաժին 1՝ ՀՀ քննչական կոմիտեին ամրակցված Մալաթիա-Սեբաստիա վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերում | | | | | |
|---|---|---|---|---|---|
| h/h | Մասնակցի անվանումը | Գնման հայտով սահմանած գին | Գին /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Գին /ներառյալ ԱԱՀ/ |
| 1 | «Մուրադյան ՇԻՆ 86» ՍՊԸ | 5 709 460 | 3,737,751 | 747,550 | **4,485,301** |
| 2 | «Բեստ Քոնսթրաքշն» ՍՊԸ | | 4,040,000 | 808,000 | **4,848,000** |
| 3 | «Ջի ԷԼ Թի» ՍՊԸ | | 4,073,334 | 814,666 | **4,888,000** |
| 4 | «ՋԱՏԵԳ» ՍՊԸ | | 4,142,250 | 828,450 | **4,970,700** |
| 5 | «ԱՐՍՏՈՆ» ՍՊԸ | | 4,705,000 | 941,000 | **5,646,000** |
| | «Ռենեսանս Գրուպ» ՍՊԸ | | 2,400,000 | 480,000 | **2,880,000** |

## 9. Հանձնաժողովը որոշեց՝

9.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի համաձայն «ՀՀ ՔԿ ԳՀԱՇՁԲ-ՄՍԸՆԱ-24/1» ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած **«Մուրադյան ՇԻՆ 86» ՍՊԸ-ին:**

9.2 Հաստատել թիվ **«ՀՀ ՔԿ ԳՀԱՇՁԲ-ՄՍԸՆԱ-24/1»** ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:*

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ**
Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ) ____________

**անդամներ՝**

1.Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) Ջ. Հունանյան

2.Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) Ա. Հայրապետյան

3.Գնման Պատասխանատու /Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) Գ. Սեփոյան

4.Գնման Պատասխանատու /Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) Ա. Թումանյան

5.Գնման Պատասխանատու /հանձնաժողովի քարտուղար (ԳՊ/ՄՀՄ) Ս. Նազարյան